

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՐԹԵՐ

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱԿԻ ՀԱՄԱՐ

Պարսն Արեւմտեայ Ալեքսանեանի, զպրոցներէս նախկին արքայապետ և արժանաւոր տեսչի, չափազանց կանոնաւոր պահած տեսչական գործերի մէջ, մենք գտել ենք բաւական մի ստուարակազմ տետրակ:

Այդ տետրակի հէնց առաջին էրեսում ձեռագիր ծաղկանկար տառերով գրուած է հետեւեալը.

«Արձանագրութիւն գործոց Ազգային հոգաբարձութեան Դավրիժու 1874 Յուլիս»

Ապա երրորդ էջից սկսուած է խիստ մաքուր գրուած մի արձանագրութիւն՝ «Ատենագրութիւն ազգային» վերնագրով:

Այդ վերադրութեան տակ առաջ է բերուած 17 օգոստոս 1879 ամի Թաւրիզում գումարուած մի ընդհ. ժողովի արձանագրութիւնը և 117 հոգի ժողովականներէ կողմից հաւանուած ու ընդունուած մի կանոնադրութիւնը Արամեան զպրոցին վերաբերող:

Հոգաբարձութիւն բաւոր այդ ատենագրութիւն—կանոնադրութեան մէջ ասուած է «Գործադիր ժողով»:

Թաւրիզցիք (Հայաքիք) իրենց չափազանց հպարտ և բաղաւոր պէտք է գգան, իսկապէս, որ ունեցել են խիստ օրինասէր, կարգապահ և դէպի զպրոցական գործը սրտացաւ հայրեր:

Նրանք դեռ սրանից ուղիղ, գրեթէ 33 տարի առաջ զգացել են զպրոցի և հոգաբարձական կանոնադրութեան պակասն ու դրանից առաջացած չարքեր և շտապել են կազմել մի օրինակելի և մեր այդ հայրերին պատուաբեր մի կանոնադրութիւն:

Հազար երանի, եթէ այդ իմաստուն կանոնադրութիւնը չմոռացուէր, արխիւներում ու փոշու տակ չմնար: Եթէ այդ իմաստալից կանոնադրութիւնը մոռացուած չլինէր մեր վրին չէր փաթաթուի խակ, մեր կեանքին անխաւառ ժողովրդից չմշակուած, վերից տրուած ու մեզ իսպառ աւելորդ և ծանր բեռ դարձած, 6 ամիս մի տեղում բնակողին ընտրուելու և ընտրելու իրաւունք տուող և պատուհաս դառած «Ատրպատականի կանոնադրութիւնը», որ ժամ է մի կողմ դնել և առաջնորդուել բացարձակապէս մեր հայրերի մշակած այդ կանոնադրութեամբ, ինչ-ինչ յարմար փոփոխութիւններով:

Մի բան որ ժողովրդով եւ ժողովրդի գիտութեամբ չէ եղիլ, դա նրա համար քննութեայ պարտադիր եւ օգտակար էլ չի կարող լինել:

Անա թէ ինչ ենք կարողուած կանոնադրութեան վերջում:

«Կանոնադրութիւնս գրուեցաւ 17 Օգոստոսի 1879 ամի եւ քաղաքիս ազգային առաջնորդական դահլիճի մէջ կարդացուեցաւ և մեր հասարակութեան հանգամանակ յարմար դասելով¹⁾ մեր իսկական քննութեայ պարտադիր և յօժարութեամբ ստորագրեմք:

Այդ իմաստնօրէն մշակուած կա-

1) Եթէ դեռ 33 տարի առաջ մեր հայրերը մի բան «հասարակութեան հանգամանակ յարմար դասելով» ընդունել են, ինչպէս մենք այժմ ընդունենք մի կանոնադրութիւն, որ ոչ մեր կեանքին յարմար է ոչ ժողովուրդը դրանից լուր է ունեցել և ոչ էլ մեզ օգուտ ունի և միշտ էլ իր թերութիւններով, վրդովմունք, խանգարումներ, կուր և անհամակութիւններ է առաջ բերում մեր հոգաբարձական ընտրութեանց միջոցներին:

նոնադրութեան եթէ միայն 6-րդ կէտը պահուած լինէր, ապա մենք այսօր կունենայինք նիւթականով, բարոյականով և ուսումնականով խիստ բարձր մի Արամեան զպրոց, որ իրաւամբ կարող էր կոչուել Պարսկահայոց «Ներսիսեանը»:

Որովհետեւ մենք իբրեւ հում նիւթ, Արամեան զպրոցի պատմութիւնը գրողներէ համար, առաջ պիտի բերենք թէ այդ ատենագրութիւն—կանոնադրութիւնը և թէ «Մտքի» մէջ պարբերաբար պիտի տանք վերոյիշեալ տետրակում եղած միւս նիւթերն էլ, այդ պատճառով մենք այլևս աւելորդ համարեցինք կրկնակի ծանրաբեռնել մեր յօդուածը 6-րդ կամ այլ կէտերից ցիւտաւոր մէջ բերելով: Կարեւոր կէտերը կարող են նկատուի իրենք ընթերցողները:

Միայն այստեղ մենք մի ցանկութիւն, մի առաջարկ կուղէինք կրկնելու երեքնեւ Ղալաթաղի յարգոյ ծխականներին, որ նրանք անպայման այսուհետեւ ընդմիջող ապագայ ընտրութիւններին առաջնորդուէին մեր հայրերի մշակած այդ կանոնադրութեամբ, աւելացնելով կամ կրճատելով նոր-նոր կէտեր՝ համաձայն մեր կեանքի արդի պահանջներին:

Անս այդ արձանագրութիւնը.

Ատենագրութիւն Ազգային

Դաւրէժ 17, օգոստոս 1879 ամի ²⁾

Ազգային ընդհանուր ժողով.

Տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի մէջ՝ և միակամ հաւանութեամբ կանոնադրութիւնը քաղկացեալ տան և ութ յօդուածից՝ հաստատուեցաւ Դաւրէժի հայ հասարակութեան ³⁾ յատուկ ստորագրութեամբ:

Կանոնագրութիւն

Պաշտօնավարութիւն Դաւրէժ Բաղաքիս Հայոց Ազգային զպրոցի.

Որովհետեւ Բաղաքիս Ազգային ուսումնարանը իսկզբանէ անտի չունենալով յատուկ կանոնադրութիւն որ նրանով զպրոցի բարեկարգութիւնը ապահովութեամբ յարատեւէր՝ և ժամանակ առ ժամանակ զանազան պատճառներով զպրոցի վիճակը ենթարկուած էր շատ խոչընդոտներէ և մեծամեծ դժուարութիւններէ մինչև անգամ խանգարման և խախտման իսկ, վասն որոյ հայոց հասարակութիւնս բարեհաճեցաւ ունենալ գոնիայ մէկ համառօտ կանոնադրութիւն, որի ուղղութեամբ սրբազան պարտաւորութիւն դնել այն ամեն անձինքներէ վերայ՝ որք ընդունուած և հրաւիրուած կլինին պաշտօն կարգավարութեան Ազգային զպրոցի, ուստի հասարակաց հաւանութեամբ ⁴⁾ այսօր որ է տան և եօթն օգոստոս ամսոյ 1879 ամի. Առաջնորդական դահլիճի մէջ ժողովելով կազմեցաք ներքոյ գրեալ կանոնադրութիւնը իւրաքանչիւր ստորագրութիւնը դնելով թղթի վերայ:

1. Դաւրէժ Բաղաքիս մէջ գտնուող ա-

²⁾ Առաջ ենք բերում բնագիրն աւփոփով թէ լեզուի, թէ ուղղագրութեան և թէ կէտագրութեան կողմից: Մ. Ս.

³⁾ Այդ բառով միայն Ղալաթաղի է ի նկատի առնուած, որովհետեւ այդ ժամանակ Լիւաւան իբր անոնան թաղ ի նկատի չէր առնուած, և միայն Ղալաթի զպրոցը գոյութիւն ունէր որ կոչուած էր «Հայոց ազգային Դպրոց» և ամեն ինչ էլ դառնում էր այդ զպրոցի շուրջը:

⁴⁾ Բոլոր ընդ թուաները մերն են:

մէն հայ անհատը՝ որ իւրեան պարտաւոր կկացուցանէ այս կանոնադրութիւնը ընդունել և սորա նպատակի համեմատ վարուել և գրեթէ յայնժամ ընտրող քննելու իրաւունք կունենայ:

2. Դաւրէժում ⁵⁾ հայ հասարակութեան պարտաւորութիւնն է, որ հարկը պահանջած ժամանակին ժողովել ի միասին առաջնորդարանի կամ վարժարանի մէջ, և բուէից կամ ծախսերի առաւելութեամբ ընտրել Ազգային զպրոցի համար ութն գործակալ անձիք, որոնք կկոչուին գործադիր ժողով:

3. Գործադիր ժողովը իւր մէջէն կընտրէ. 1 Ատենագրակի 2 Խորհրդական, 1 Գանձապետ, 1 Երէց փոխան Եկեղեցւոյ, Տնօրէն ⁶⁾ և երկու օգնական զպրոցի համար:

4. Գործադիր ժողովին վերաբերում է Ազգային ներքին գործերի այսինքն Ազգային Եկեղեցւոյ զպրոցի ստացուածների բարեգործական հաստատութիւնների և սոցա նման պատկանեալների վարչութիւնը և բարեկարգութիւն մտից և ծախուց կարգադրութիւն և տնօրէնութիւնը իւրեանց առանձին սահմանած կանոնադրութեան համեմատ:

5. Եկեղեցւոյ և զպրոցի ծախքերը կը հոգացուին Եկեղեցւոյ հասոյթովը զպրոցի դրամագլխի տոկոսներ (տոկոսներով Ա. Տ. Վ.), ազգային ստացուածների եկամուտովը, տէրութեանց շնորհած թոշակովը և ուրիշ մուտքերի արդիւնքներովը և այլն: Եւ աւելացած դրամը կը գումարուի զպրոցի դրամագլխի վրայ:

6. Գործադիր ժողովի անդամները անհատաբար եւ հաւաքաբար պատասխանատուութիւնս պէտքէ յանձն առնին մի անգամայն հաստատ պահել Եկեղեցւոյ և զպրոցի բարեկարգութիւնը հոգել (իմս հոգալ) նոցա իւրաքանչիւր մանրամասնութեան վրայ: Ուշադրութիւն դարձնել վարժապետաց դաստիարակ և ուսուցանելի առարկաների վրայ, հոգ տանել աշակերտաց բարոյական և մտաւորական զարկացման վրայ և արձակել անհամար և անհարկաւորներ: Տնտեսաբար անել Եկեղեցւոյ և զպրոցի համար եղած ծախքերը, միևնոյն միջոցին զպրոցը բարեկարգ պահելով և զպրոցի վիճակը և դրութիւնը օր ըսդ օրէ բարելաւելով հանդերձ, զպրոցի դրամագլխի եթէ չկարողանան աւելացնել գէթ չպակսեցնեն. և ազգային ստացուածները չօտարացնել առանց նորանց փոխարէնը գնելու կամ արժէքը զպրոցի դրամագլխի վերայ աւելացնելու և իւրեանց պաշտօնը սկսած ժամանակին ինչ գումար և գոյք որ յանձնուած է, պաշտօնավարութեան պայմանաւոր լուցած միջոցին՝ միեւնոյնների հաւասար առանց պակասի պէտք է վերադարձնեն իւրեանց փոխարէնը քննուած գործակալներին. եւ պակասած գումարը եւ արժէքը պարտաւոր են իւրեանցից չալ հաւասար բաժնով:

7. Գործադիր ժողովը զպրոցի նկատմամբ իւր ամեն անելու գործողութեանց և Տնօրէնութեանց մէջ բոլորովին ազատ է:

8. Գործադիր ժողովը Եկեղեցւոյ և վար-

⁵⁾ Այստեղից ձեռագիրը բոլորովին փոխուած է.

⁶⁾ Նախագահ է ուղում ասել.

ժարանի ծախքերի պակասը հոգալու և եկամուտն էլ աւելացնելու հարկ կարող է ամեն տեսակ արդար լաւ եւ հաւասարական (պատուաւոր Ա. Տ. Վ.) միջոցների զիմել. գոր օրինակ Աշակերտներէից թօշակ առնել հանկանալութիւն բանալ՝ ժողովրդից կամ հասարակութիւնից մասնաւոր նրպաստ հաւաքել և այլն: Այս ամենը նախ պէտք է իւրանցից ըսկսուի:

9. Ընտրող հասարակութիւնը պարտաւոր են գործադիր ժողովի ձեռարկութեանցը և ջանիցը սրտով ու գործով օգնել և ոչ մէկ կերպով խօչընդոտներ և արգելքներ չդնել:

10. Մէկ ընտրող կամ մէկ քանի ընտրողներ՝ եթէ գործադիր ժողովի արածները անարդար վնասակար և կանոնադրութեան հակառակ համարեն՝ յայնժամ կարող են մին առանձին տեղում ժողով կազմել և մէկ բողոքագիր գրել և ստորագրել ներկայացնելով գործադիր ժողովին, և գործադիր ժողովը պարտաւոր է բողոքագիրն ընդունել և արձանագրել տալ պատենագրութեան մէջ և ապա նկատողութիւն անել, եթէ բողոքագրի ստորագրողների թիւը բոլոր ընտրողների թուի կէսին հաւասար լինի, այն ժամանակ պարտաւոր են մինչև 15 օր ընդհանուր ժողով կազմել և բողոքին առթիւ տուող կէտերը քննութեան առնելով խնդիրը լուծել:

11. Ամեն տարի վարժարանական շրջանը լրացած կամ հաշիւը պահանջած ժամանակին նախագայը (նախագահը-Ա. Տ. Վ.) կամ գործադիր ժողովը բոլոր ընտրող հասարակութիւն կհրաւիրէ, յայնժամ իւրեանց պաշտօնավարութեան համարը և հաշիւը կտան և ունեցած առաջարկութիւնը կանեն:

12. Գործադիր ժողովը առ սակաւ երեք տարուան համար կընտրուի. գործադիր ժողովի և նրա անդամներից մէկ քանին փոխելու համար, ընդհանուր ժողովի մէջ ներկայ գտնուողների մեծամասնութեան հաւանութեամբ և միաբանութեամբ պէտքէ իրագործել:

13. Մէկ ընտրող որ մէկ ժողովի ներկայ չգտնուի իրաւունք չունի ժողովի արած որոշումը մերժելու, այլ միայն կարող է ժողովի արած որոշման դէմ իւր առաջարկութիւնը արձանագրել տալ:

14. Մէկ ընտրող որ ըստ տիպուածոյն չկարողանայ մէկ ժողովի ներկայ գտնուել՝ կարող է իւր առաջարկութիւնը և ասելիքները թղթով հաղորդել ժողովի՝ և ժողովն էլ պարտաւոր է նկատողութիւն անել:

15. Գործադիր և ընդհանուր ժողովի մէջ ամեն ինչիւր ձայների առաւելութեամբ կլուծուի:

16. Մէկ որեւիցէ ձեռնարկութիւն եթէ գործադիր ժողովը ինքնին չկարողանայ որոշում տալ՝ և նորա իրաւունքից բարձր լինի յայնժամ պարտաւոր են մէկ մասնաժողով կազմել և ի միասին խնդրի որոշում տան:

17. Այս կանոնադրութիւնս կարող է

